Արձանագրություն N 4

«ԳՀԱՊՁԲ-2019/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «_15__»«մայիսի» 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամիկոնյան, Գ.Եղիազարյան, Տ.Սաֆարյան, Տ.Տեր-Կուրեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

1. **«ԳՀԱՊՁԲ-2019/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

1.1 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից, էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է հարցման մասին տեղեկատվությունը, առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների մասով, ինչպես նաև սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 46-րդ կետի համաձայն, հանձնաժողովի գնահատմանն է ներկայացվել կոմիտեից ստացված տեղեկատվությունը և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ սահմանված ժամկետում գնահատելու համար:

1.3 Հայտերի գնահատման արդյունքում, բոլոր մասնակիցների փաստաթղթերը գնահատվել են բավարար, բացառությամբ «Վազարթ» ՍՊ ընկերության: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ընկերությունը ունի օրենքով նախատեսված շեմը չգերազանցող՝ 2,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, չի գերազանցում թույլատրելի առավելագույն շեմը /չափաբաժին N94-րդ՝ 962,400,0 ՀՀ դրամ/, սակայն գերազանցում է՝ N3-րդ չափաբաժնի մասով՝ 16 500,0 ՀՀ դրամ /1835,0 դրամով/ և N97-րդ չափաբաժնի մասով՝ 94,392,0 ՀՀ դրամ /1056,0 դրամով/:

1.4 «Վազարթ» ՍՊ ընկերությունը ծանուցվել է ՀՀ կառավարության N526-Ն որոշման 47-րդ կետի համաձայն, այն է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԳՀԱՊՁԲ-2019/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

2.1 «Վազարթ» ՍՊ ընկերությունը, էլեկտրոնային փոստի միջոցով, ներկայացրել է բանկային փոխանցման քաղվացք, համաձայն որի ս.թ. մայիսի 14-ին ընկերության կողմից վճարվել է՝ 20000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճար, որը ըստ ՀՀ ՊԵ կոմիտեի տեղեկատվության, հանդիսանում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի դրույթներով՝ եթե կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Հանձնաժողովը որոշեց՝

- մերժել «Վազարթ» ՍՊ ընկերության հայտը միայն N3-րդ, N97-րդ չափաբաժինների մասով, քանի որ N94-րդ չափաբաժինի մասով պարտավորությունը չի գերազանցում թույլատրելի առավելագույն շեմը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի:

3. «ԳՀԱՊՁԲ-2019/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

3.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ընկերության հայտը N3-րդ, N97-րդ չափաբաժինների մասով մերժվել է և հիմք ընդունելով ՀՀ կառավարության N526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց՝ «ԳՀԱՊՁԲ-2019/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Էկոմիքս» ՍՊ

ընկերությանը՝ նշված չափաբաժինների մասով և առաջարկել ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ.Մանուկյան

Անդամներ՝ _____ Տ.Սաֆարյան

_____ Վ.Մամիկոնյան

_____ Գ.Եղիազարյան

_____ Տ.Տեր-Կուրեղյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան